



ՅԻԱՆԱԿԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(40.18-31)

Որո՞ւ կը նմանցընէք զԱստուած կամ ի՞նչ բանի հետ կը բաղդատէք: Կուռքի՞: Բայց ձուլագործն է որ կուռքը կը ձուլէ, ու ոսկերիչը զայն ոսկիով կը պատէ եւ արծաթէ շղթաներ կը շինէ անոր համար: Նմանապէս հիւսնը անփուտ ծառի կոճղ մը կ'առնէ եւ իր ճարտարութեամբ կ'աշխատի անկէ անշարժ կուռք մը շինելու: Այնքան տգէ՛տ էք, չլսեցի՞ք կամ ձեզի չպատմուեցա՞ւ երբեք Աստուծոյ մասին, որ երկրին հիմերը դրաւ: Աստուծոյ մասին, որ կը նստի երկրագունտէն ա՛յնքան վեր՝ որ երկրի բնակիչները մարախներու չափ կ'երեւին իրեն: Ա՛ն է որ երկինքը վարագոյրի պէս կը տարածէ եւ զայն վրանի պէս կը կանգնէ իրեն համար: Ինքն է որ իշխանները կը բնաջնջէ եւ երկրի դատաւորները կ'ոչնչացնէ: Բոյսի մը պէս անոնք հազիւ տնկուած կամ ցանուած, եւ տակաւին հողին մէջ չարմատացած՝ կը փչէ անոնց վրայ եւ կը չորնան, ու փոթորիկը զանոնք կը տանի յարդի պէս:

Արդ, «Որո՞ւ կը նմանցընէք զիս, ո՞վ

կը հաւասարի ինծի», կ'ըսէ Սուրբը, Աստուած: Երկինք բարձրացուցէք ձեր աչքերը եւ դիտեցէ՛ք. ո՞վ ստեղծեց այս բոլոր աստղերը, եթէ ոչ ան՝ որ զանոնք իրենց անուներով կը կանչէ: Ա՛յնքան մեծ է իր իշխանութիւնը եւ սաստիկ՝ իր զօրութիւնը, որ անոնցմէ որեւէ մէկը դուրս չի գար իր խօսքէն: Ինչո՞ւ կը տրտնջաս ուրեմն, ո՞վ Յակոբ, կամ ինչո՞ւ կը մտածես, ո՞վ Իսրայէլ, ըսելով. “Տէրը իմ վիճակս չտեսաւ, իմ Աստուածս իրաւունքս մոռցաւ”: Չե՞ս գիտեր, տակաւին չհասկցա՞ր թէ յաւիտենական Աստուածն է ան, որ երկրի սահմանները ստեղծեց.

որ ո՛չ կը յոգնի եւ ո՛չ կը թուլնայ, եւ անքննելի է անոր իմաստութիւնը: Ինքն է որ ոյժ կու տայ յոգնածին, կը զօրացնէ տկարացածը: Նոյնիսկ երիտասարդները պիտի յոգնին ու թուլնան, եւ կտրիճները՝ յուսալքուին, բայց Տիրոջ ապաւինողները իրենց ոյժերը պիտի վերանորոգեն եւ արծիւներու պէս թեւ ու թռիչք ունենան. պիտի վազեն առանց թուլնալու, պիտի քալեն առանց յոգնելու:

... Տիրոջ ապաւինողները իրենց ոյժերը պիտի վերանորոգեն եւ արծիւներու պէս թեւ ու թռիչք ունենան...

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԵՒՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ՆԱՄԱԿԷՆ
(4.16-5.10)

Այսուհետեւ համարձակօրէն մօտենանք Աստուծոյ աթոռին, ողորմութիւն եւ շնորհք գտնելու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային:

Արդարեւ, ամէն քահանայապետ որ մարդոց մէջէն կ'ընտրուի, պաշտօն ունի մարդոց կողմէ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց մեղքերուն համար նուէրներ եւ զոհ մատուցանելու: Եւ որովհետեւ ինքն ալ մարդ է, կրնայ հասկնալ մարդոց տգիտութիւնն ու փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց, քանի ինք եւս նոյն տկարութիւնները ունի: Ատոր համար է, որ ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար պէտք է զոհ մատուցանէ:

Գիտէք նաեւ թէ ոեւէ մէկը չի՛ կրնար ինքն իրեն քահանայապետութեան պատիւը առնել, այլ Աստուած է որ զայն այդ պաշտօնին կը կանչէ, ճիշտ ինչպէս Ահարոն կանչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ քահանայապետութեան պատիւը, այլ զայն ստացաւ Աստուծմէ, որ իրեն ըսաւ. “Դուն իմ սիրելի Որդիս ես, այսօր քեզ ծնայ”, իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. “Դուն յաւիտեան քահանայ ես, Մելքիսեղեկ քահանային պէս”:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք մահուանէ փրկել: Եւ Աստուած զինք լսեց, որովհետեւ

խոնարհ էր, բայց իր չարչարանքներու փորձառութեամբ սորվեցաւ թէ ի՛նչ բան է հնազանդութիւնը: Եւ այսպէս կատարեալ ըլլալէ ետք, յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ բոլոր անոնց համար որոնք իրեն կը հնազանդին, քանի Աստուած զինք քահանայապետութեան կոչած էր, Մելքիսեղեկ քահանային պէս:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(18.9-14)

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. “Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ:

Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ”: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. “Աստուած, ներէ մեղաւորիս մեղքերը”: Կ'ըսեմ ձեզի,՝ եզրակացուց Յիսուս,՝ ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

«... ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»: